

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**(Բ. Կիրակէ Աղուհացից)****ՆՈՐ ՍՏԵՂԾՈՒՄ**

Խըլէ ինձմէ, Տէ՛ր, այս աչքերն իմ չար,
 Որ յար աշխարհիս պղծութեանց կը նային.
 Ու տո՛ւր նոր աչքեր որ դիտեն անճառ,
 Անբացատրելի՜ փառքերդ երկնային:

Դադրեցո՛ւր ո՛վ Տէր, թրթռումը լեզուիս,
 Ամբարշտութեան խօսքերէն իսպառ,
 Ու տո՛ւր ինձ նոր մը, որով խեղճ հոգիս
 Պատմէ փրկութեան գործերդ հրաշափառ:

Խըլացո՛ւր նաեւ ականջներս իմ բաց՝
 Որ հաճոյք կը զգան չար խօսք լըսելէն.
 Ու նորեր ձեւէ ա՛յնպէս յարդարուած
 Որ ներդաշնակութիւնն երկնից վայելել:

Կըտրէ՛ ինձմէ Տէ՛ր, ձեռքերն իմ աղտոտ,
 Անիրաւութեանց տիղմով թաթաւուն,
 Ու նոր ձեռքեր տո՛ւր որ սեղանիդ մօտ
 Փարին փրկութեան ցից եղջիրներուն:

Անդամալուծէ՛ ոտքերն իմ փութկոտ՝
 Որ շա՛տ քաշեցին թիւր շաւիղներէ,
 Ու նորեր ինձ տո՛ւր, որով Քեզ գամ մօտ
 Ու սխալ քայլ մը, ալ խիղճս չը ներէ:

Նորոգէ՛, ո՛վ Տէր, այս սիրտըս ալ հին,
 «Միսէ սիրտ մը» տո՛ւր փափուկ, զգայուն,
 Մեղքեր չը խոցեն ալ զայն բընաւին,
 Ու զգայ ան սոսկ Սէրը Քու անհուն:

Նորաստեղծէ՛ զիս, Տէ՛ր, բոլորովին,
 Սրտով, ու հոգւով նոր ըլլամ բոլոր,
 Ու մէջըս մեռնի ալ ան մարդը հին,
 Դժոխքին չըլլա՛մ ես որսը մոլոր:

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Տարսոն